

29.04.2009թ.

թիվ 1052/IV

Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկի նախագահ  
պարոն Արթուր Չավադյանին

Հարգելի պարոն Չավադյան

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Ազդագիր և հաշվետվություններ թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգի 4/04-ի բաժին IV-ի գլուխ 23-ի պահանջները Ձեզ ենք ներկայացնում «Չարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության տարեկան ընդհանուր ժողովի 28.04.2009թ. «Չարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինների վճարման մասին թիվ 01-04 և «Չարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների ընտրության և կազմի մասին թիվ 01-07 որոշումները:

Առդիր` 2 թերթ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

“ARMENIAN DEVELOPMENT BANK”  
OPEN JOINT-STOCK COMPANY



“ԱԾԻՆԻՆԷԷՔՔ ԱՂԻԷ ԾԱՇԱՔՆՈՒՅԵՐ” ԻԾԷԾՍՈՒՂ  
ԱՔՕՔԻՂԱԾԻՂԱ ԻԱՍՂՈՂԻ

**«ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ»  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**«ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ**

**ՈՐՈՇՈՒՄ**

28.04.2009

թիվ 01-04

**«Չարգացման Բանկ» ԲԲԸ բաժնետոմսերի դիմաց տարեկան  
շահութաբաժինների վճարման մասին**

«Չարգացման Բանկ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, հիմք  
ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և «Չարգացման Բանկ»  
ԲԲԸ կանոնադրության (նոր խմբագրությամբ) պահանջները,

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. «Չարգացման Բանկ» ԲԲԸ 2008թ. գործունեության արդյունքում ստացված զուտ  
շահույթից հասարակ անվանական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարել:

2. «Չարգացման Բանկ» ԲԲԸ 2008թ. գործունեության արդյունքում ստացված զուտ  
շահույթից արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումն իրականացնել  
2009թ. մարտի 16-ի դրությամբ կազմված բաժնետերերի ցուցակում նշված արտոնյալ  
բաժնետոմսերի սեփականատերերին, համաձայն «Չարգացման Բանկ» ԲԲԸ  
կանոնադրության 32-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված բանաձևով կատարված  
հաշվարկների, 2009թ. հունիսի 01-ից մինչև 2009թ. սեպտեմբերի 01-ը  
ժամանակահատվածում:

3. Սույն որոշումն ընդունվել է միաձայն և ուժի մեջ է ընդունման պահից:

**ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Ջ. ՋԱՆՈՅԱՆ**



**«ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ»  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**«ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

28.04.2009

թիվ 01-07

«Չարգացման Բանկ» ԲԲԸ Տնօրենների խորհրդի  
անդամների ընտրության և կազմի մասին

«Չարգացման Բանկ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և «Չարգացման Բանկ» ԲԲԸ կանոնադրության (նոր խմբագրությամբ) պահանջները,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ընտրել Սամվել Դումաշյանին և Վահագն Դավթյանին որպես «Չարգացման Բանկ» ԲԲԸ Տնօրենների խորհրդի անդամներ՝ 2009թ. հունիսի 15-ից մինչև 2010թ. հունիսի 15-ը ժամկետով:

2. Ընդունել ի գիտություն «Չարգացման Բանկ» ԲԲԸ Տնօրենների խորհրդի կազմում նշանակալից մասնակիցների կողմից մինչև 2010թ. հունիսի 14-ը ներկայացուցիչներ նշանակելու հայտարարությունները, որոնցով «Չարգացման Բանկ» ԲԲԸ-ի քվեարկող բաժնետոմսերի 19.684 %-ի սեփականատեր Ռուբեն Հայրապետյանը որպես իր ներկայացուցիչ Տնօրենների խորհրդում նշանակում է Արմեն Մինասյանին, 17.438%-ի սեփականատեր Արայիկ Մեխակյանը՝ Յուրի Աղասյանին և 16.640 %-ի սեփականատեր Գրիգոր Տերմենջյանը՝ Ալեքսանդր Գրիգորյանին:

3. «Չարգացման Բանկ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի անունից լիազորել բանկի նշանակալից մասնակից Ռուբեն Հայրապետյանին՝ Տնօրենների խորհրդի անդամներ Յուրի Աղասյանի, Ալեքսանդր Գրիգորյանի, Վահագն Դավթյանի, Արմեն Մինասյանի և Սամվել Դումաշյանի հետ կնքել համապատասխան աշխատանքային պայմանագրեր (համաձայնագրեր):

4. Սույն որոշումն ընդունվել է միաձայն և ուժի մեջ է ընդունման պահից:

**ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Չ. ՋԱՆՈՅԱՆ**